Կարգապահական գործ թիվ ԿԳ-14160

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի օգոստոսի 12-ի թիվ 152-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԹԻՎ ԿԳ/84-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՔՐԻՍՏԻՆԱ ԳԵՎՈՐԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը՝ նիստը նախագահող Սիմոն Բաբայանի, անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Սարդարյանի, Ալեքսանդր Սիրունյանի և Նելլի Հարությունյանի կազմով,

քարտուղարությամբ Պալատի կարգապահական գործերը համակարգողի պաշտոնակատար՝ Ի. Փիլոյանի,

մասնակցությամբ փաստաբան Քրիստինա Գևորկյանի,

քննության առնելով փաստաբան՝ Քրիստինա Գևորկյանին (արտոնագիր թիվ 1125) կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Տ՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը</u>**

22.10.2014թ. Դիմող՝ Լիանա Ավանեսյանը (**այսուհետ նաև՝ Դիմող կամ Դիմումատու**) դիմում է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ՝ խնդրելով փաստաբան Քրիստինա Գևորկյանին (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) ենթարկել կարգապահական պատասխանատվության: Դիմումատուն հայտնել է, որ իր իրավունքները դատարանում պաշտպանելու համար դիմել է փաստաբան Քրիստինա Գևորկյանին, որը իրեն պատշաճ իրավական օգնություն ցույց չի տվել՝ դատական նիստի ընթացքում դատարանին իրականությանը չհամապատասխանող տեղեկությունն է ներկայացրել դատարանին;

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

21 նոյեմբերի 2014թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 405-Ա/ԿԳ-14160 որոշմամբ փաստաբան Քրիստինա Գևորկյանի նկատմամբ ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ

որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.3 ենթակետի պահանջի խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ և դիմող է ճանաչվել Լիանա Ավանեսյանը:

21.11.2014թ.կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Մարիամ Ղուլյանին, իսկ 26.01.2015 վերջինիս կողմից կազմվել է համապատասխան եզրակացությունը: Սակայն 06.02.2015թ. Մարիամ Ղուլյանի կողմից ներկայացվել է ինքնաբացարկի միջնորդություն, որը 09.02.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահն որոշմամբ բավարարվել է: Այնուհետև 16.02.2015թ. կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող անձ Ռոբերտ Մանվելյանին, իսկ 15.04.2015թ. վերջինիս կողմից կազմվել է համապատասխան եզրակացությունը:

3. <u>Դիմողի և Պատասխանողի համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունը.</u>

Դիմողը նշում է, որ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Քրիստինա Արշակի Գևորկյանի հետ կնքել է պայմանագիր իր շահերը Երևանի Կենտրոն դատարանում պաշտպանելու համար:

Վերջինիս կողմից հայցադիմումը դատարան մուտքագրելուց հետո, երբ արդեն իսկ հայցադիմումը վարույթ վերցնելուց հետո իմ փաստաբան Քրիստինա Արշակի Գևորկյանը զանգահարել է ինձ և ասել, որ հակառակ կողմը ցանկանում է բանակցել:

Փաստաբանիս առաջարկով իր գրասենյակում քրոջս հետ հանդիպել ենք իմ գործով հայցվորի անունից ներկայացված ինչ-որ անձի և հայցվորի փաստաբանին: Վերջիններս բանակցության ընթացքում առաջարկել են 2.5 տարի առաջվա առուվաճառքի պայմանագրով գնված տարածքը հետ տալ իրենց, քանի որ հարկայինում նրանց համար խնդիր է առաջացել տարածքի վաճառքից առաջացած հարկերի վճարման մասով: Ես հրաժարվել եմ կատարել նրանց առաջարկեր: Այդ հանդիպումից հետո անընդհատ իմ փաստաբանը առաջարկում էր ինձ հրաժարվել տարածքից, և այն վերադարձնել նրանց:

Ես տեսնելով, որ իմ փաստաբանը ավելի շատ մտահոգված է հակառակ կողմի շահերով, նաև, քանի որ չէր ցանկանում մասնակցեմ դատական նիստին, ինձ մոտ կասկած առաջացավ վերջինիս ազնվության վերաբերյալ, և ես որոշեցի հրաժարվել նրա ծառայություններից: Դրանից հետո ես պայմանագիր կնքեցի այլ փաստաբանի հետ մասնակցեցի դատական նիստին, որտեղ ինձ համար շատ անակնկալ, ես հայցվորի ներկայացուցչի դատական նիստի ժամանակ լսեցի, որ իմ նախկին փաստաբանը Քրիստինա Արշակի Գևորկյանը, նախնական նիստի ժամանակ արել է հայտարարություն, որ իբր ես մինչ Թումանյան փողոցի վրա գտնվող կիսանկուղը գնելը տեղյակ եմ եղել, որ վաճառողը ամուսնացած է: Ես վրդովվեցի այդ սուտ փաստից դատական նիստում այդ մասով տվեցի բացատրություն: Դատական նիստից հետո պահանջել եմ իմ փաստաբանից, որպեսզի նա դատարանից վերցնի դատական նիստերի ձայնագրությունը:

Դատական նիստերի ձայնագրությունը լսելուց հետո, համոզվեցի, որ Քրիստինա Արշակի Գևորկյանը իրապես արել է կեղծ հայտարարություն այն դեպքում, երբ իր գրասենյակում մասնակցել էր հակառակ կողմի հետ իմ ունեցած բանակցությանը և նաև այդտեղից տեղեկացել էր, որ ես երբևիցե չեմ շփվել և չեմ ճանաչել հայցվորին ու նրա ամուսնուն, և ինձ համար անհասկանալի էր, թե ինչու էր թույլ տվել իրեն իմ դեմ ուղղված նման անօրինական քայլ:

Դիմողի կողմից 12.12.2014թ ներկայացվել է բացատրություն, որով նա հայտնել է, որ առկա է 11.06.2014թ-ի դատական նիստի ձայնագրության կրիչը, որի ունկնդրումից պարզ է դառնում, որ փաստաբան Քրիստինա Գևորկյանը երկու անգամ հայտնել է, որ Դիմողը տեղյակ է եղել վաճառողի ամուսնացած լինելու մասին: Մասնավորապես 11.06.2014թ. դատական նիստի արձանագրության 3:55-րդ րոպե, մեջբերում «ինչպես իմ վստահորդներն են հայտնել իմացել են, որ այդ անձը ամուսնացած է այնպես չէ որ չեն իմացել, որ կին կա և այլն... »

11.06.2014թ. դատական նիստի արձանագրության 5-րդ րոպե, դատավորի հարց «երրորդ անձն իմացելա ամուսնացած՛լինելու հանգամանքի մասին»,

Ք.Գևորկյան «այո» :

Դիմողը նշել է, որ երբևէ Քրիստինա Գևորկյանին կամ որևէ այլ անձի չի հայտարարել, որ իմացել է վաճառողի ամուսնացած լինելու մասին, այն պարզ պատճառով, որ չի իմացել այդ փաստաբանի մասին:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունը

Կարգապահական վարույթի ընթացքում 10.11.2014թ. փաստաբան Քրիստինա Գևորկյանը բացատրություն է ներկայացրել ՀՀ փաստաբանների պալատ, որում, մասնավորապես նշվել է, որ Լիանա Ավանեսյանը դիմել է իրեն 2014թ մարտի 31 -ին ներկայացնելով իր դեմ ներկայացված հայցադիմումի օրինակ, որում ինքը հանդիսացել է որպես երրորդ անձ: Հայցադիմումը վերաբերվել է 2011թ-ին իր կողմից կնքված անշարժ գույքի պայմանագիրը անվավեր ճանաչելու պահանջին: Քրիստինա Գևորկյանը Դիմողի հետ քննարկել է գործի հանգամանքները բացատրել է վերջինիս իրավիճակի ուժեղ և թույլ կողմերը:

Քննարկումից հետո Դիմողը որոշել է գործը հանձնել Գևորկյանին, ապա տեղում լիազորագիր է կազմվել և հայցադիմումի պատասխան:

Ընթացքում Քրիստինա Գևորկյանը հեռախոսազանգ է ստացել փաստաբան Կարեն Աղաջանյանից, ով խնդրել է հանդիպում կողմի հետ բանակցությունների նպատակով: Բանակցության ընթացքում հայցվոր կողմը առաջարկել է կնքել հաշտության համաձայնագիր և դատական կարգով անվավեր ճանաչել 2011 թ Լիանա Ավանեսյանի և Հովհաննես Ավետիսյանի միջև նոտարական կարգով կնքված գործարքը:

Քրիստինա Գևորկյանի պնդմամբ նա խորհուրդ է տվել Լիանային չշտապել պատասխանի հետ և մտածել համաձայնություն տալուց առաջ: Լիանան Քրիստինա Գևորկյանին հայտնել է, որ ինքը որևէ որոշում կայացնել չի կարող և, որ Քրիստինայի հետ կկապվի ՌԴ-ում գտնվող իր քույր Ալվինան: Դրանցից հետո բոլոր քննարկումները դատական գործի հետ կապված անց է կացվել Ալվինայի հետ:

Քրիստինա Գևորկյանը նշում է, որ հանդիպել է գործարքը վավերացնող նոտարին, ով հատնել է, որ Հովհաննես Ավետիսյանը գործարքը կնքելիս գրավոր հայտարարություն է տվել նոտարական գրասենյակում իր չամուսնացած լինելու մասին:

Քրիստինան ստացել է այդ գրավոր հայտարարությունը, որը պետք է ներկայացներ դատարանում կախված դատաքննության ընթացքից:

Մինչ առաջին նախնական նիստը, որ նշանակվել էր հունիսի 11-ին Ալվինան դեռևս չուներ վերջնական որոշում իրենց արված առաջարկի վերաբերյալ:

Քրիստինա Գևորկյանը փաստաբան Կարեն Աղաջանյանին հայտնել է, որ չունի որևէ որոշում և չի կարող քայլեր ձեռնարկել մինչև իր վստահորդների վերջնական որոշումը:

Այնուհետև Քրիստինա Գևորկյանի հետ կապվել է Ալվինան և խնդրել է հետաձգել նախնական նիստը, քանի որ դեռ վերջնական որոշում չունի: Քրիստինան հայտնել է, որ կհետաձգի որևէ մի պատրվակով:

Դատարանում Քրիստինա Գևորկյանը միջնորդություն է ներկայացրել նախնական նիստը հետաձգելու մասին այն հիմքով, որ կողմերը գտնվում են բանակցությունների մեջ և ժամանակ է պետք, որպեսզի իր վստահորդը ժամանի ՌԴ-ից, միջնորդությունը մերժվել է:

Այնուհետև Քրիստինա Գևորկյանը այլ պատճառաբանություն է բերել, որ Դատարանին պետք է ներկայացնի գրավոր ապացույց նորից, միջնորդությունը բավարարվել է առանց նախնական դատական նիստ հետաձգելու:

Գույքի վաճառողի ամուսնացած լինելու մասին Լիանա Ավանեսյանի տեղեկացվածության վերաբերյալ Քրիստինա Գևորկյանը նշում է, որ Դատարանի հարցին պատասխանել է հետևյալ կերպ (հիշում է իր մոտավոր բառերը) մեջբերում . «*գործարքը կնքողը հասուն անձ է և դժվար է ենթադրել նա ամուսնացած է թե ոչ ամեն դեպքում մատանի էլ չի եղել ձեռքին, որ իմանար*»: Քրիստինա Գևորկյանի խոսքերով Դատարանը իր այլ հայտարարությունը մեկ նախադասությամբ նշել է, որ նախապատրաստական փուլի ընթացքում երրորդ անձի ներկայացուցիչը դատարանին հայտնել է, որ երրորդ անձը տեղյակ է եղել հայցվորի ամուսնացած լինելու հանգամանքի մասին:

Քրիստինա Գևորկյանը նշում է, որ հետագայում Ալվինան հրաժարվել է իր ծառայություններից և վերջինս իրենց գործով այլևս չի զբաղվել:

Քրիստինա Գևորկյանը նաև նշում է, որ իր պնդմամբ Դիմողի նոր փաստաբանը վարվել է անազնիվ անցանկալի դատական ակտի կատարման պատճառը վերագրելով Գևորկյանի գործողությունների:

Միաժամանակ Պատասխանողը նշում է, որ չի եղել Լիանա Ավանեսյանի գործի ելքով շահագրգռված, որ վիճելի արտահայտության կապակցությամբ իր դատարանում ասված բառերը հիշում է մոտավոր և որ դատական նիստի ձայնագրությունը լսելուց հետո համոզվել է, որ, այնուամենայնիվ, Դիմողի կողմից մեջբերված արտահայտությունը թույլ է տվել:

Քրիստինա Գևորկյանը 11.04.2005թ. լրացուցիչ բացատրությամբ ներկայացրել է պալատ: Մասնավորապես Քրիստինա Գևորկյանը կրկին հայտնել է, որ Լիանա Ավանեսյանը, ավելի ստույգ՝ գույքի իրական տերը հանդիսացող, ՌԴ-ում բնակվող քույրը Ալվինան, իրեն հայտնել են բազմաթիվ տեղեկություններ, ի

թիվս այլ տեղեկության, որ կարող է նրանք պատկերացրել են, այսինքն՝ իմացել են, որ գնորդը կարող է լինել ամուսնացած: Ավելին, թե դիմումատուն, թե քույրը հաղորդել են այն մասին, որ գործով պատասխանողը եղել է ամուսնացած ե նրանք տեսել են, որ գույքի նախկին տերերը /թվով 4 հոգի/ «բռնել են ինչ-որ խեղճ ու կրակ տղա» գործարքը կնքելու համար:

Քրիստինա Գևորկյանը մեջբերելով «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 4.3. ենթակետը գտնում է, որ դիմումատուն չի ապացուցել հոդվածով ամրագրված խախտման փաստերը, այն է՝ գիտակցաբար, դիտավորյալ դատարանին տեղեկություն ներկայացնելը: Որն էլ կեղծ կամ ապա կողմնորոշիչ տեղեկությունը Քրիստինա Գևորկյանը «գիտակցաբար, դիտավորյալ և կեղծ ցուցմունք հաղորդելը» հասկանում է միայն մեկ պայմանի առկայության դեպքում որևէ կերպ շահագրգռված լինելու դեպքում:

Ըստ Քրիստինա Գևորկյանի, նա հայցվոր կողմի ներկայացուցիչների հետ ծանոթ չի եղել, որևէ կերպ շահագրգռված չի եղել, առաջին անգամ նրանց հետ շփվել է տվյալ գործի առնչությամբ՝ դիմումատուի և նրա բարեկամուհու ներկայությամբ իրենց ՀԿ-ի գրասենյակում, երկրորդ անգամ հակառակ կողմի ներկայացուցիչների հետ շփվել է Skype-ով Ալվինայի և նրա ամուսին՝ Արթուրի ներկայությամբ, և երրորդ անգամ նրանց հետ առնչվել է առաջին դատական նիստին:

Ըստ Քրիստինա Գևորկյանի, Դիմումատուն և գույքի իրական տերերը վեճը հաշտությամբ լուծելու նրա գործողությունները որակում են որպես «շահագրգռված» լինել, ինչը անտրամաբանական է ու զուրկ է որևէ հիմնավորումից: Իսկ իրեն, որպես ներկայացուցչի որևէ կերպ օրենքով և այլ իրավական ակտերով արգելված չէ վեճը իր վստահորդին կամ հակառակ կողմին /և հակառակը/ առաջարկելու լուծել հաշտությամբ և բանակցություններ վարելու դրա ուղղությամբ՝ եթե հաշտության պայմանները չեն հակասում վստահորդի շահերին:

Ըստ Քրիստինա Գևորկյանի, իր գործողությունները կլինեին ինքնանպատակ նշված բանակցությունները վարվեին առանց դիմումատուների իմացության: Եթե բացակայում էր դիմումատուների համաձայնությունը վեճը լուծելու հաշտությամբ, և բնականաբար, եթե Քրիստինա Գևորկյանը մասնակցեր դատաքննության փուլում, ևս գործը տանելու էր հակառակ կողմի մտադրությունների բացահայտման ուղղությամբ, այսինքն՝ այն, որ գործարքը անվավեր են ցանկանում ճանաչել ոչ թե դրա մտադրությունը ունենալով, այլ որ այդ ամենը արվում է հարկերից խուսափելու նպատակով /ապացույցը իմ պնդման հանդիսանում է Վարչական դատարանում գտնվող և կասեցված՝ սույն գործով վճռի սպասելիքներով թիվ ՎԴ/10329/05/13 գործը/:

Ըստ Քրիստինա Գևորկյանի, նա ավելին, քան համոզված է, որ դիմումատուն և գույքի իրական սեփականատերերը իրենց հաջորդ ներկայացուցչին չեն հաղորդել վերը նշված հանգամանքների վերաբերյալ, ինչը նրան հնարավորություն չի տվել պատշաճ պաշտպանություն իրականացնել դատարանում: Երրորդ ներկայացուցիչը ենթադրում է ծանոթացել է այդ մասին իր կողմից Պալատին ներկայացված բացատրություններից և առարկությունից: Երկրորդ ներկայացուցիչը իր հերթին անկախ այն հանգամանքից թե Քրիստինա Գևորկյանը ինչ է հաղորդել դատարանին և ինչ իրավական հետևանք կարող էր

այն առաջացներ գործի ելքի վրա դիմումատուներին հաղորդել է, որ իբր Քրիստինա Գևորկյանն է մեղավոր նրանում, որ տվյալ գործով հայցվորի հայցը բավարարվել է: Այսինքն, առանց բացատրելու գործի հանգամանքները և դրանց իրավական կարգավորումները, ակնհայտ կերպով վստահորդներին գցել է մոլորության մեջ, ինչը նրանց հիմք է տվել իրեն սույն մեղադրանքը առաջադրելու համար:

Քրիստինա Գևորկյանի պնդմամբ իր կողմից դատարանին հաղորդած տվյալները համապատասխանում են իրեն հաղորդած տվյալներին /հակառակ պարագայում Ալվինան իրենից չեին պահանջի, որպեսզի նոտարից վերցնել տեղեկանք իր հիշելով հայցվորի կողմից չամուսնացած լինելու վերաբերյալ հաղորդում տված լինելու մասին, ինչը սակայն ևս չեր կարող նրանց օգտին օգտագործվեր դատարանում/, այլ հարց է իրեն հաղորդած տեղեկությունը Քրիստինա Գևորկյանը պետք է օգտագործեր դատարանում թե ոչ:

Քրիստինա Գևորկյանը մեկ անգամ ևս նշում է, որ տվյալ հայտարարությունը չեր կարող հանդիսանալ հիմք հայցը բավարարելու համար, մանավանդ որ նույն դիմումատուն դատական նիստին անկախ ամենից հաղորդել է դատարանին, որ չի իմացել կողմերի ամուսնացած լինելու վերաբերյալ:

Քրիստինա Գևորկյանը հայտնում է, որ ուսումնասիրելով սույն գործով կայացված վճիռը ակնհայտ է, որ այն կայացվել է հետապնդելով միայն մեկ նպատակ՝ գործարքը շուտափույթ ճանաչել անվավեր: Մի այլ հանգամանք ևս Քրիստինա Գևորկյանը հիշում է, որ հաջորդ դատական նիստը դատարանը ցանկություն ուներ նշանակելու սեղմ ժամկետներում, եթե Քրիստինա Գևորկյանը չհաղորդեր, որ գտնվելու է արձակուրդում՝ ԱՄՆ-ում, իսկ օգոստոս ամսին դատարանն էր արդեն գտնվելու արձակուրդում, և դատարանը չեր կարող արդեն ակնհայտորեն անտեսել իր այս միջնորդությունը:

Ըստ Քրիստինա Գևորկյանի վճռով նույնիսկ անդրադարձ չի կատարվել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանաչելու դեպքում անվավերության հետևանքներ կիրառելու հարցին, ինչը սակայն կատարվել է Վերաքննիչ դատարանի կողմից՝ մասնակի բողոքը բավարարելով:

Քրիստինա Գևորկյանը 11.04.2005թ. ամսաթվով թվագրված լրացուցիչ բացատրությամբ ամփոփել է իր բոլոր բացատրությունները:

12.08.2015թ. Քրիստինա Գևորկյանը հայտնեց հետևյալ տեղեկությունները՝ *«նախկին տերերը ուզում են անվավեր ճանաչել այդ պայմանագիրը, և ես բացատրեցի* ***բարեխիղճ ձեռք բերողի իրավունքները իրեն և նաև թույլ կողմերը բացատրեցի իրեն****»:*

Քրիստինա Գևորկյանը հայտնեց նաև՝ «***նշված գործով հեռանկարներ, ճիշտն ասած, չէի տեսնում***»:

3.3. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը</u>

Խորհրդին.

Պալատի կարգապահական գործը նախապատրաստող անձի կողմից 15.04.2015թ. կազմված եզրակացության համաձայն՝ նախապատրաստող անձը գտել է, որ Պատասխանողների կողմից կատարված արարքը չի բավարարում Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.3 խախտման հատկանիշներով սահմանված արարքի հատկանիշներին:

Նախապատրաստողը հաստատված է համարել հետևյալ փաստերը՝

- թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. Գործով Քրիստինա Գևորկյանը ներկայացրել է Լիանա Ավանեսյանի շահերը.
- թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. գործով Քրիստինա Գևորկյանը եղել է Լիանա Ավանեսյանի ներկայացուցիչը.
- Քրիստինա Գևորկյանը տվյալ գործով նախնական դատական նիստի ընթացքում ընդունել է այն հանգամանքը, որ Լիանա Ավանեսյանը տեղյակ է եղել պատասխանող Հովհաննես Ավետիսյանի ամուսնացած լինելու մասին.:

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի (**այսուհետ՝ Վարույթի կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ **Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս**:

Պալատի խորհուրդը ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև Կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը՝

1. Թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. գործով Աննա Սարգսյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Հովհաննես Ավետիսյանի, երրորդ անձ Լիանա Ավանեսյանի՝ գործարքն անվավեր ճանաչելու, և որպես հետևանք՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին.
   (Նշված փաստը հաստատվել է պատասխանողի բացատրություններով և datalex.am տեղեկատվական համակարգում զետեղված տվյալներով)
2. Քրիստինա Գևորկյանը թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. գործով ստանձնել է Լիանա Ավանեսյանի պաշտպանությունը և ներկայացրել է Լիանա Ավանեսյանի շահերը, դատարանում.
   (Նշված փաստը հաստատվել է նախապատասխանողի եզրակացությամբ, պատասխանողի բացատրություններով և datalex.am տեղեկատվական համակարգում զետեղված տվյալներով)

3. 11.06.2014թ կայացած դատական նիստին հայցվորի ներկայացուցիչ Սյուզաննա Մալխասյանը հայտարարել է երրորդ անձը չգիտեր գույքը համատեղ սեփականության իրավունքով Աննա Սարգսյանին պատկանելու մասին:
   (Նշված փաստը հաստատվել է գործում առկա թիվ ԵԿԴ 0544/02/14 *քաղ. գործով 11.06.2014թ դատական նիստի ձայնագրությամբ*)[1]
4. Քրիստինա Գևորկյանը տվյալ գործով 11.06.2014թ նախնական դատական նիստի ընթացքում ընդունել է այն հանգամանքը, որ իր վստահորդը տեղյակ է եղել Պատասխանողի՝ ամուսնացած լինելու վերաբերյալ:
   - Նիստի 3-րդ րոպեի ընթացում երրորդ անձի դիրքորոշումը ներկայացնելիս Քրիստինա Գևորկյանը հայտարարել է «*ինչպես իմ վստահորդներն են հայտնել իրենց դիրքորոշումը իմացել են, որ այդ անձը ամուսնացած է այնպես չէ որ չեն իմացել*»
   - Նիստի 5-րդ րոպեի ընթացում դատավորի հնչեցրած հարցին՝ երրորդ անձը իմացել է պատասխանողի ամուսնացած լինելու մասին Քրիստինա Գևորկյանը պատասխանել է «*այո*»
   - Նիստի 8-րդ րոպեի ընթացում դատավորի հնչեցրած հարցին՝ դուք պնդում եք և չեք առարկում այն հանգամանքի, որ ձեր վստահորդը երրորդ անձը իմացել է պատասխանողի ամուսնացած լինելու մասին Քրիստինա Գևորկյանը պատասխանել է «*այո*»

   (Նշված փաստը հաստատվել է գործում առկա թիվ ԵԿԴ 0544/02/14 *քաղ. գործով 11.06.2014թ դատական նիստի ձայնագրությամբ*)
5. Քրիստինա Գևորկյանը տիրապետել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված բարեխիղճ ձեռք բերողից իր գույքը հետ պահանջելու իրավական կարգավորման առանձնահատկություններին:
   (Նշված փաստը հաստատվել է պատասխանողի բացատրություններով)[2]
6. Թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. գործով գնորդի՝ Լիանա Ավանեսյանի բարեխղճության բացակայության, այն է՝ այդ գույքը համատեղ կյանքում ձեռք բերված լինելու մասին իրազեկված լինելու փաստի ապացուցման պարտականությունը կրում է հայցվոր կողմը:
   (Նշված փաստը հաստատվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածի պահանջով):
7. Քրիստինա Գևորգյանը սույն կարգապահական վարույթի ընթացքում չի ապացուցել, որ թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. գործով կողմեր Աննա Սարգսյանի և Հովհաննես Ավետիսյանի ամուսնացած լինելու մասին տեղյակ է եղել իր վստահորդը և որ վերջինս այդ տեղեկությունը հայտնել է Քրիստինա Գևորկյանին:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները</u>

Պատասխանողի՝ Քրիստինա Գևորկյանի նկատմամբ (արտոնագիր թիվ

[1] ԵԿԴ 0544/02/14 քաղաքացիական գործով ձայնագրման կրիչ, 11.06.2014թ դատական նիստի ձայնագրության 3-րդ րոպե:
[2] 06.08.15թ Պալատի խորհրդի նիստի ձայնագրություն. նիստին տրված բացատրություն՝ ձայնագրության 9-րդ րոպե:

1125) 2010-2015թթ ընկած ժամանակահատվածում կարգապահական պատասխանատվության չի ենթարկվել:

7. <u>Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը</u>

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Քրիստինա Գևորկյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պատճառաբանությամբ.

Թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. գործով Աննա Սարգսյանը հայց է ներկայացրել դատարան ընդդեմ Հովհաննես Ավետիսյանի, երրորդ անձ Լիանա Ավանեսյանի՝ գործարքն անվավեր ճանաչելու, և որպես հետևանք՝ իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

Հայցի հիմքում դրվել է այն հանգամանքը, որ վերը նշված պայմանագրով Լիանա Ավետիսյանի կողմից ձեռքբերված գույքը հանդիսացել է Հովհաննես Ավետիսյանի և Աննա Սարգսյանի ամուսնության՝ համատեղ կյանքի ընթացքում ձեռք բերված գույքը, որն էլ վերջինիս համաձայնության բացակայության պայմաններում օտարվել է Լիանա Ավանեսյանին:

Հարուցված հայցի կապակցությամբ Լիանա Ավանեսյանը իրավական օգնություն ստանալու ակնկալիքով դիմել է Քրիստինա Գևորկյանին, իսկ վերջինս ստանձնել է իր պաշտպանությունը և ներկայացրել է նրա շահերը դատարանում:

Ըստ Քրիստինա Գևորկյանի նա ամբողջությամբ տիրապետել է ոլորտին վերաբերող իրավական դաշտին:

Պալատի խորհրդին տրված բացատրություններում Քրիստինա Գևորկյանը նշել է, որ ամբողջությամբ ներկայացրել է իր վստահորդին ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված բարեխիղճ ձեռք բերողից իր գույքը հետ պահանջելու իրավական կարգավորման առանձնահատկությունները:

Ձեռք բերման բարեխղճության իրավահարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 275-րդ հոդվածով: Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *Եթե գույքը հափշտակմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից:*

Այսինքն՝ սույն իրավական նորմի վերլուծությունից հետևում է, որ սեփականատերն իրավունք ունի գույքը բարեխիղճ ձեռք բերողից հետ պահանջել, եթե այն հատուցմամբ ձեռք է բերվել օտարելու իրավունք չունեցող անձից, և ձեռք բերողը չի իմացել կամ չէր կարող իմանալ դրա մասին:

Եթե նշված խնդիրը դիտարկվի դատական պաշտպանություն իրականացնող փաստաբանի տեսանկյունից, ապա ակնհայտ է, որ բարեխիղճ

ձեռք բերողի իրավունքները պաշտպանելիս փաստաբանը դատարանին առնվազն պետք է համոզի, որ իր վստահորդը չի իմացել կամ չէր կարող իմանալ կոնտրագենտի իրավասության բացակայության կամ թերության մասին, վերապահելով հակառակի ապացուցման պարտականությունը հայցվոր կողմին: Փաստաբանը կարող էր նաև զբաղեցնել պասիվ վարքագիծ և հաշվի առնելով, որ այդ փաստի ապացուցման պարտականությունը կրում է հայցվոր (հակառակորդ) կողմը, դատարանը ստիպված պետք է կիրառեր ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի կանոնը, ըստ որի՝ **եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը**:

Սույն կարգապահական գործի փաստերով հաստատվել է, որ Քրիստինա Գևորկյանը դատարանում դրսևորել է ճիշտ հակառակ վարքագիծ:

Վերջինս դատարանում հայտարարել է, որ իր վստահորդը՝ տեղյակ է եղել Հովհաննես Ավետիսյանի ամուսնացած լինելու վերաբերյալ այն պայմաններում, երբ մինչ իր հայտարարությունը հակառակորդ կողմի ներկայացուցիչը դատարանին հայտնում է, որ Լիանա Ավանեսյանը նման տեղեկություն չի ունեցել:

Ավելին՝ Քրիստինա Գևորկյանը տեղյակ է եղել, որ գործարքը կնքելիս Հովհաննես Ավետիսյանի կողմից տրվել է գրավոր հայտարարություն ամուսնացած չլինելու վերաբերյալ:

Սույն կարգապահական վարույթի ընթացքում նշված փաստը հաստատել է նաև Դիմող կողմը տալով բացատրություն առ այն, որ նա չի իմացել վաճառողի ամուսնացած լինելու մասին, և Քրիստինա Գևորկյանին բնականաբար երբևէ նման տեղեկատվություն չի հաղորդել:

Պալատի խորհուրդը գտնում է, որ Քրիստինա Գևորկյանը նշված գործողությունները իրականացրել է գիտակցաբար: Այդ փաստը հիմնավորվում է վերը նշված հիմնավորումներով, ինչպես նաև թիվ ԵԿԴ/0544/02/14 քաղ. գործով 11.06.2014թ դատական նիստի ձայնագրությամբ:

Այսպես՝ նիստի 3-րդ րոպեի ընթացում որպես ներկայացուցիչ, երրորդ անձի դիրքորոշումը ներկայացնելիս նա անում է հետևյալ արտահայտությունը «**ինչպես իմ վստահորդներն են հայտնել իրենց դիրքորոշումը իմացել են, որ այդ անձը ամուսնացած է այնպես չէ որ չեն իմացել**»: Հարկ է նշել, որ այդ պահին դատարանը նման հարց չի հնչեցրել Քրիստինա Գևորկյանը նշված արտահայտությունը անում է իր կամքով և իր նախաձեռնությամբ, որպես իր վստահորդի դիրքորոշում: Այնուհետև նիստի 5-րդ րոպեի ընթացում դատավորի հնչեցրած հարցին՝ *երրորդ անձը իմացել է պատասխանողի ամուսնացած լինելու մասին* Քրիստինա Գևորկյանը պատասխանում է «**այո**»: Նիստի 8-րդ րոպեի ընթացում դատավորի հնչեցրած հարցին՝ դուք պնդում էք և չեք առարկում այն հանգամանքին, որ ձեր վստահորդ երրորդ անձը իմացել է պատասխանողի ամուսնացած լինելու մասին Քրիստինա Գևորկյանը կրկին պատասխանում է «**այո**»:

Հետևաբար՝ ակնհայտ է, որ Քրիստինա Գևորկյանը վերը նշված գործողությունները իրականացրել է գիտակցաբար:

ՀՀ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ

1/4 որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.3. կետը սահմանում է, որ՝ *Փաստաբանը երբեք չպետք է գիտակցաբար կեղծ կամ ապակողմնորոշիչ տեղեկություն ներկայացնի դատարանին:*

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող՝ «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ նաև՝ Վարույթի կարգ**) 15-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *կողմերից յուրաքանչյուրը պետք է ապացուցի իր վկայակոչած փաստերը*:

Վարույթի կարգի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Եթե բոլոր ապացույցների հետազոտումից հետո վիճելի է մնում փաստի առկայությունը կամ բացակայությունը, ապա դրա բացասական հետևանքները կրում է այդ փաստի ապացուցման պարտականությունը կրող կողմը:*

Պալատի խորհուրդը վերոհիշյալ կանոններից ելնելով գտնում է, որ Քրիստինա Գևորկյանը պարտավոր էր ապացուցել իր վկայակոչած այն փաստը, որ՝ իր վստահորդ Լիանա Ավանեսյանը տեղյակ է եղել թիվ ԵԿԴ 0544/02/14 քաղ. գործով կողմեր Աննա Սարգսյանի և Հովհաննես Ավետիսյանի ամուսնացած լինելու մասին և որ այդ տեղեկությունը վստահորդը փոխանցել է փաստաբան Քրիստինա Գևորկյանին: Քրիստինա Գևորկյանն այս փաստը չի ապացուցել, հետևաբար Պալատի խորհուրդը գտնում է, որ Քրիստինա Գևորգյանը դատարանին գիտակցաբար կեղծ և ապակողմնորոշիչ տեղեկություններ է տրամադրել իր վստահորդի կողմից իրեն չհայտնած փաստի վերաբերյալ, ընդ որում՝ ի վնաս իր վստահորդի դատավարական շահի:

Փաստորեն փաստաբանը ընկալելով ձեռքբերման բարեխղճության իրավական կարգավորման առանձնահատկությունները իրականացրել է նշված կարգավորման հակասող պաշտպանական գործողություններ, որոնք հանգեցրել են բացասական հետևանքների իր վստահորդի համար:

Պալատի խորհուրդը համադրելով սույն գործին վերաբերող փաստերը և գնահատելով գործում առկա ապացույցները, արժանահավատ է համարում դիմող Լիանա Ավանեսյանի տրված բացատրությունը՝ առ այն, որ նա չի իմացել վաճառողի ամուսնացած լինելու մասին: Տվյալ պայմաններում Պալատի խորհուրդը Լիանա Ավանեսյանի իրազեկվածության վերաբերյալ Քրիստինա Գևորկյանի կողմից դատարանին հայտնած տեղեկությունը համարում է իրականությանը չհամապատասխանող այն է՝ կեղծ տեղեկություն:

Վերոգրյալը նկատի ունենալով Պալատի խորհուրդը գտնում է, որ նման վարքագիծ դրսևորելով փաստաբան Քրիստինա Գևորկյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.3. կետով սահմանված կանոնի խախտում՝ այսինքն՝ գիտակցաբար ներկայացրել է դատարանին կեղծ տեղեկություն:

* * * * *

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության

արժանի այլ հանգամանքներ:

Նույն հոդվածով նախատեսված են կարգապահական տույժերի հետևյալ տեսակները՝

1) նկատողություն.

2) խիստ նկատողություն.

3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների.

4) տուգանք.

5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Պատասխանողի կողմից իրականացված գործողությունների հետևանքը, գտնում է, որ Պատասխանողի նկատմամբ պետք է կիրառի տուգանք տույժի տեսակը, ինչպես նաև լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցելը, որպես՝ լրացուցիչ տույժ:

Վերոգրյալը հիմք ընդունելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի, 39.9. հոդվածի, ինչպես նաև ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» 30-րդ և 31-րդ հոդվածների պահանջներով, Պալատի խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան՝ Քրիստինա Գևորկյանին (արտոնագիր թիվ 1125) ճանաչել մեղավոր Փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.3 ենթակետի պահանջի խախտման համար:

2. Փաստաբան՝ Քրիստինա Գևորկյանի (արտոնագիր թիվ 1125) նկատմամբ նշանակել տույժ՝ տուգանք 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

3. Փաստաբան՝ Քրիստինա Գևորկյանի նկատմամբ նշանակել լրացուցիչ տույժ՝ 8 (ութ) ակադեմիական ժամ ընդհանուր տևողությամբ՝ «Դեոնթոլոգիա» թեմայով, իր հաշվին լրացուցիչ վերապատրաստման դասընթացներին մասնակցելու պարտականության ձևով:

4. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել փաստաբան Քրիստինա Գևորկյանին և Դիմողին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի խորհրդի
նիստը նախագահող՝ **Սիմոն Բաբայան**